№ 137 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 29 **1899** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 29 № 137

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կազմակերպված մաքառում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Սղնախից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իզմիրեանց գրական մրցանակաբաշխութիւն. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Չը լսվող ձայներ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԱՔԱՌՈՒՄ

—

«Մշակի» մէջ տպված բազմաթիւ տեղեկութիւններից մեր ընթերցողները գիտեն, որ այս տարի երաշտութեան պատճառով մեր ցանքսերը վնասվեցին բոլոր այն տեղերում, որոնք չեն ոռոգվում և ջուր ստանում են անձրևներից: Արդէն առաջին տարին չէ, որ երաշտութիւնը վնասում է մեր երկրագործ ժողովրդին և վերջին երեսուն տարվայ ընթացքում համարեա ամեն տարի մեր երկրի դաշտերը այս և այն տեղ, փոքր թէ շատ աստիճանով, վնասվում են երաշտից: Այնպիսի սաստիկ անբերրի տարիները, ինչպէս էին 1879 թուականը և յետոյ 1893, 1897 և ներկայ 1899 թուականները, բացառապէս կախված էին եղանակի ազդեցութիւնից. բայց ուշադիր հետազօտողները վաղուց նկատել են, որ առհասարակ մեր արտերը և սովորական տարիներում զգում են երաշտութիւն, զգում ջրի պակասութիւն, որ նախկին ժամանակներում չէր նկատվում:

Այդ դիտողութիւնը շատ ուղիղ է: Արդարև, մեր սարահարթերի ընդարձակ դաշտերը այժմ աւելի են կարօտ անձրևի, քան առաջվայ ժամանակները: Կարծես հողը ցամաքել է, աւելի չորացել է, ջրի պաշարները կորցրել է, և մնում է ծարաւ: Եւ դա հասկանալի է: Նախկին ժամանակներում հողը բոլորը չէր լինում մշտական մշակութեան մէջ, նրա մի մասը հանգստանում էր և այդպիսով թէ իր պտղաբերութիւնը աւելացնում և թէ ջուր ամբարում իր մէջ: Իսկ այժմ նոյն հողը, անխնամ կերպով և անընդհատ հերկվելով, այլ ևս կարողութիւն չունի իր մէջ ամբարել բաւականաչափ ջուր: Աւելացրէք դրան և այն, որ շատ տեղերում կտրատվել են անտառները, որոնք օգնում էին ջուր պահպանելուն և նրան տնտեսաբար ապառելուն: Այդպիսով երաշտութիւնը առաջ եկաւ, իբրև խելացի տնտեսութեան բացակայութեան արդիւնք, և դա մի տխուր իրողութիւն է, որի դէմ պէտք է կռուել սիստեմատիկան կերպով, կազմակերպված միջոցներով: Եթէ մենք կռուում ենք ֆիլոկսերայի, միլդիուի, օիդիումի, տաւարի ժանտախտի դէմ սիստեմական կերպով, մենք պէտք է նոյնպէս կռուենք և երաշտութեան դէմ, իբրև մեր երկրագործութեան ամենաուժեղ թշնամիներից մէկի դէմ:

Երաշտութեան դէմ կռիւ տեղի է ունեցել և ուրիշ տեղերում, Եւրօպայում, Ամերիկայում, վերջին ժամանակներս և Ռուսաստանի հարաւում: Նոյն կռիւը պէտք է փորձենք և մենք, աշխատելով աւելացնել ջրի քանակութիւնը մեր դաշտահողերի մէջ: Հանգուցեալ պրոֆեսոր Շիլկին և Կոստրչեվ շատ տարիներ զբաղված էին այդ հարցով և նրանց աջողվեց առաջարկել հողի մէջ ջուր ամբարելու կամ պահպանելու մի քանի եղանակներ: Նրանք պարզեցին, որ հերկելու ձևը, հերկելու ժամանակը ցանքսերի դասաւորումը ազդում է ջրի շատ թէ քիչ սպառման վրա և առաջարկեցին համապատասխան միջոցներ: Վերջապէս հարց յարուցվեց և ոռոգման գործը աւելի ընդարձակել՝ ջրի աւազաններ և ջրամբարներ շինելով, որի գեղեցիկ օրինակներից մէկը կազմում է մեր պարծանքներից մէկը՝ այն է Ներսիսեան լիճը, որը սակայն մընում է եզակի:

Ժամանակ է մեզանում երաշտութեան դէմ մաքառելու հարցը դնել հրապարակի վրա, իբրև ժամանակից լուրջ և անյետաձգելի հարցերից մէկը և մշակել թէ ուրիշների ցուցմունքների և թէ սեփական փորձերի հիման վրա խելացի միջոցներ, որոնք օգնէին մեր հողագործի քայքայվող տնտեսութեան և ազատէին նրան վերջնական անկումից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ամեն տարի, ամառը, Կ. Պոլսի հայ խմբագիրները մի առանձին հետաքրքրութեամբ սկսում են հետևել օրացոյցին, որպէս զի իմանան թէ երբ է գալիս Սահակի և Մեսրոպի տօնը: Հաղար ու մի խնամակալութիւնների տակ ճընշված, հիւթերից զրկված մամուլը այդ տօնի ժամանակ մի քիչ ազատ շունչ է քաշում. կարելի է մի բան գրել, կայ մի թեթև շարժում, մի անմեղ ուրախութիւն, որի վրա հրճվելը ոչ ոքին վնաս չէ տալիս: Եւ պօլսական մթնոլորտի մէջ մի քիչ թարմութիւն մտցնող այդ հանգամանքը Սահակի և Մեսրոպի տօնը չէ, այլ այդ օրը կատարվող Իզմիրեան մրցանակաբաշխութիւնը: Հանգուցեալ Իզմիրեանի կտակի չնորհիւ Կ. Պոլիսը տարին մի անգամ գրական մի հաստատ տօն է կատարում: Բայց տօնը առաւելապէս մամուլի համար է. գրվում են երկար ու բարակ խորհրդածութիւններ, գովասանքներ, նկարագրվում է հանդէսը մանրամասնօրէն, տպվում է յանձնաժողովի տեղեկագիրը: Այսքանը քիչ նիւթ չէ լրագրութեան համար: Այս տարի էլ, ի հարկէ, նոյն ոգևորութիւնը, նոյն բարի ցանկութիւնները, գովեստները. մինչև անգամ «մեծ» գրագէտ Եղիա Տէմիրճիպաշեանը մի մեծ ֆելիէտօն գրեց «Սուրհանդակ լրագրում և, ինչ կասկած, հնարեց այդ գործի համար մի վեցյարկանի խրթին վերնագիր—«Տեսլածդրագրական Հանդէս»: Բայց այդ բոլոր գրուածքների մէջ երևում է պօլսեցու չար ճակատագիրը: Եթէ չես կարող քննադատել, պակասութիւններ ցոյց տալ, պէտք է գովես, սքանչանաս—այսպէս է այդ ճակատագրի հրամանը: Եւ սակայն, յայտնի է, նոյն իսկ պօլսեցիներին էլ լաւ յայտնի է, որ Իզմիրեան մրցանակը վաղուց արդէն խայտառակվել է Կ. Պոլսի էֆէնդիների և հոգևոր հայրերի խնամակալութեան տակ, կորցնելով իր պատիւը և հանգուցեալ բարեգործի գեղեցիկ միտքը դարձնելով խնամիական սիրաշահութեան, անձնական համակրանքների և հակակրանքների միջոց: Յայտնի է, որ շատ խայտառակ գործեր են պակվել այդ մրցանակով և շատ բարեխիղճ աշխատութիւններ չեն արժանացել դնահատող էֆէնդիների ուշադրութեան: Եւ ուրիշ ինչ կարելի է սպասել մի մանաժողովից, որի անդամներն են՝ անփոփոխ Մկրեան քահանան, Նորատունկեան էֆէնդին և այլն, իսկ գրական աշխատութիւնները «քննում» են այնպիսի մարդիկ, որոնց մէջ հեղինակաւորն է տխրահռչակ Աչըգեանը, մի ժամանակ պատրիարք Կ. Պոլսի: Գործը կատարվում է նահապետական կարգով, ինչպէս այդ վայել է Թիւրքիայի պէս մի նահապետական երկրին: Յանձնաժողովը ստանալով մի աշխատութիւն, ուղարկում է իր ցանկացած էֆէնդիին կամ սրբազանին և երբ ստանում է գրաւոր կարծիք (շատ անգամ երեքչորս տողով յայտնած) որոշում է՝ պէտք է մրցանակ տալ թէ ոչ: Այս տարի մրցանակ ստացող աշխատութիւնների մէջ, ինչպէս տեսնում են մեր ընթերցողները, կայ Խորէն Աչըգեանի գովասանական վկայութեան արժանացած մի գործ.—«Պրուսացի Տէրոյենց Յովհաննէս պատուելի»: Դա այն Տէրոյենցն է, որ 50-ական և 60-ական թուականներին փայլում էր իր խաւար գրական գործունէութեամբ, և այսօր էլ, երբ նայում էք նրա «Երևակ» անունով գործին, ձեր գլուխը պտոյտ է գալիս այն միջնադարեան աղջամուղջից, որի շտեմարանն էր այդ «պատուելին»: Տեսնում էք, պօլսեցիները մի հատ լուսաւոր մարդ չը գտան իրանց մէջ (հէնց նոյն իսկ Պէշիկթաշլեանը), որի կենսագրութիւնը տային և Տէրոյենց պատուելին է, որ այսօր ոգևորում է նրանց, մանրամասն կենսագրութեան է արժանանում, իսկ կենսագրութիւնն էլ—15 ոսկի մրցանակ: Սա ինքն ըստ ինքեան ցոյց է տալիս թէ ինչի են երկրպագում պօլսեցիները: Եւ եթէ այս տարվայ մրցանակաբաշխութեան մէջ կայ մի մխիթարական երևոյթ, այն է, որ պարգևատրութեան արժանացել է Մխիթարեան վարդապետ Հ. Քօսեանի «Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս» անունով գեղեցիկ գիրքը. մխիթարական ենք անուանում այն պատճառով, որ Իզմիրեան յանձնաժողովը տարիներ առաջ մերժեց Հ. Գալէմքերեանի «Պատմութիւն հայ լրագրութեան» աշխատութիւնը այն պատճառով, որ նա կաթոլիկ վարդապետ է և ջրու մրցանակ տուեց մի խայտառակ գործի, որ որպէս թէ նոյն պատմութիւնն էր պարունակում իր մէջ: Նշանակելի է և այն հանգամանքը, որ այս տարի գրքերը քննողներից մէկն էր Վիէննայի Մխիթարեան միաբանութեան ընդունակ և եռանդոտ անդամներից մէկը, Հ. Գաբրիէլ վարդապետ Մէնէվիշեան: Դա էլ առաջադիմական քայլ է Կ. Պոլսի մէջ և շատ լաւ կը լինէր, եթէ մի գեղեցիկ բացառութիւն չը դառնար այս «դէպքը»: Մենք ցոյց տուինք մանաւոր մխիթարական երևոյթներ. բայց այդքանով, ի հարկէ, Իզմիրեան մրցանակը չէ մաքրվում, արժանաւոր դիրք չէ բռնում մեր մէջ: Հիմնական բարեկարգութիւններ են հարկաւոր: Եւ մեզ թւում է, որ տօնական ճառերի, գովեստների մէջ ուշադրութեան արժանի է «Սուրհանդակ» լրագրի ցոյց տուած մի պակասութիւնը: Ինչպէս այդ վայել է Թիւրքիայի պէս մի նահապետական երկրին: Յանձնաժողովը ստանալով մի աշխատութիւն, ուղարկում է իր ցանկացած էֆէնդիին կամ սրբազանին և երբ ստանում է գրաւոր կարծիք (շատ անգամ երեքչորս տողով յայտնած) որոշում է՝ պէտք է մրցանակ տալ թէ ոչ: Այս տարի մրցանակ ստացող աշխատութիւնների մէջ, ինչպէս տեսնում են մեր ընթերցողները, կայ Խորէն Աչըգեանի գովասանական վկայութեան արժանացած մի գործ.—«Պրուսացի Տէրոյենց Յովհաննէս պատուելի»: Դա այն Տէրոյենցն է, որ 50-ական և 60-ական թուականներին փայլում էր իր խաւար գրական գործունէութեամբ, և այսօր էլ, երբ նայում էք նրա «Երևակ» անունով գործին, ձեր գլուխը պտոյտ է գալիս այն միջնադարեան աղջամուղջից, որի շտեմարանն էր այդ «պատուելին»: Տեսնում էք, պօլսեցիները մի հատ լուսաւոր մարդ չը գտան իրանց մէջ (հէնց նոյն իսկ Պէշիկթաշլեանը), որի կենսագրութիւնը տային և Տէրոյենց պատուելին է, որ այսօր ոգևորում է նրանց, մանրամասն կենսագրութեան է արժանանում, իսկ կենսագրութիւնն էլ—15 ոսկի մրցանակ: Սա ինքն ըստ ինքեան ցոյց է տալիս թէ ինչի են երկրպագում պօլսեցիները: Եւ եթէ այս տարվայ մրցանակաբաշխութեան մէջ կայ մի մխիթարական երևոյթ, այն է, որ պարգևատրութեան արժանացել է Մխիթարեան վարդապետ Հ. Քօսեանի «Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս» անունով գեղեցիկ գիրքը. մխիթարական ենք անուանում այն պատճառով, որ Իզմիրեան յանձնաժողովը տարիներ առաջ մերժեց Հ. Գալէմքերեանի «Պատմութիւն հայ լրագրութեան» աշխատութիւնը այն պատճառով, որ նա կաթոլիկ վարդապետ է և ջրու մրցանակ տուեց մի խայտառակ գործի, որ որպէս թէ նոյն պատմութիւնն էր պարունակում իր մէջ: Նշանակելի է և այն հանգամանքը, որ այս տարի գրքերը քննողներից մէկն էր Վիէննայի Մխիթարեան միաբանութեան ընդունակ և եռանդոտ անդամներից մէկը, Հ. Գաբրիէլ վարդապետ Մէնէվիշեան: Դա էլ առաջադիմական քայլ է Կ. Պոլսի մէջ և շատ լաւ կը լինէր, եթէ մի գեղեցիկ բացառութիւն չը դառնար այս «դէպքը»: Մենք ցոյց տուինք մանաւոր մխիթարական երևոյթներ. բայց այդքանով, ի հարկէ, Իզմիրեան մրցանակը չէ մաքրվում, արժանաւոր դիրք չէ բռնում մեր մէջ: Հիմնական բարեկարգութիւններ են հարկաւոր: Եւ մեզ թւում է, որ տօնական ճառերի, գովեստների մէջ ուշադրութեան արժանի է «Սուրհանդակ» լրագրի ցոյց տուած մի պակասութիւնը: Ինչ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՉԸ ԼՍՎՈՂ ՁԱՅՆԵՐ

(Բօլեսլավ Պրուսսի)

—

Լեհ գնդապետը մանակցել էր հինգ պատերազմի: Ողջ առողջ վերադառնալով հինգերորդից, նա պաշտօնը թողեց 1871 թւի վերջում և բնակութիւն հաստատեց Լիօնում: Վաթսուն հինգ տարեկան հասակում նա այնքան առոյգ տեսք ունէր, որ բարեկամները խորհուրդ էին տալիս նրան պսակվել: Նա ասում էր, որ իրաւ դեռ ծնկները չեն ծալվում տակին, բայց ձանձրացել է փաստաբանների բաժին դարձած Ֆրանսիայից և ուզում է վերադառնալ հայրենիք. իսկ կին որ առնէր, ճանապարհին շատ գլխացաւանք կունենար:

Նա ուզում էր որքան կարելի էր շուտ գնալ, մինչև անգամ սկսել էր գնող փնտռել իր փոքրիկ պարտէզի և տան համար: Բայց հէնց այդ միջոցին Լիօն եկան երեք հայրենակիցներ, որոնց հետ նա ծառայել էր առաջին պատերազմի ժամանակ: Մերունները նորոգեցին հին ծանօթութիւնը և դարձան դրեթէ անբաժան ընկերներ: Միասին էին խմում սև սուրճը լեհական սրճարանում, միասին էին ճաշում հիւրանոցում: Ճաշից յետոյ նրանցից իւրաքանչիւրը կարող էր գնալ, ուր սիրտն ուզէր, բայց այն պայմանով, որ չուշանայ երեկոյեան վիստին, իսկ որովհետև երբեմն երբեմն մէկը կամ միւսը պատահմամբ ուշանում էր, վճռել էին հսկել միմեանց և ամբողջ օրը միասին էին ման գալիս, երբեմն մէկ մէկի յետևից շարան կազմելով, բայց աւելի յաճախ զոյգ զոյգ կամ բոլորն իրար կողքի:

Խօսում էին նրանք գլխաւորապէս նախկին ժամանակների, անցեալ պատերազմների և ընթացիկ քաղաքականութեան մասին: Մի տարվայ ընթացքում ծերունկները գտան բոլոր սխալները և վրիպակները Կօշուտի, Մակ-Մահոնի, Բազէնի և հնադարեան զօրապետների ու հրամանատարների: Հետևեալ տարին նրանք կազմեցին պատերազմական այնպիսի նախագիծներ, որոնք, եթէ իրագործվէին, այն ասածին կը կերպարանափոխէին ամեն ինչ աշխարհիս երեսին, որ աւելի լաւ բան ցանկալ անգամ անկարելի էր:

Երրորդ տարին նրանցից մէկը մեռաւ: Սգացին նրան իբրև եղբօր, բայց թաղումից մի ամիս անց վճռեցին, որ հանգուցեալը բոբիկ էր քաղաքականութեան մէջ,—Բիսմարկը, թէև դերմանացի է, բայց և այնպէս հանճարեղ մարդ է, և դեռ յայտնի չէ, թէ ինչ բանի նա կարող է պէտք դալ:

Չորրորդ տարին մեռաւ միւս ընկերը և մեռաւ յանկարծակի: Գնդապետը նոյն իսկ անկողնին մտաւ վշտից և այնուհետև չէր խաղում այլ ևս վիստ, այլ միայն մարեաժ:

Մնացած ծերունկները այժմ աւելի ուշ-ուշ էին խօսում հին պատերազմների մասին, այլ աւելի լրագիրներ էին կարդում: Իմանալով և քննելով այն, ինչ գրում էին անգլիական թերթերում, և մտաբերելով այն, ինչ գրված էր եղել այս կամ այն ինչ ժամանակ գերմանականներում, նրանք եկան այն եզրակացութեան, թէ Բիսմարկը այն ասածին էլ չարագործ չէ, ինչպէս կարող է թւալ առաջին հայեացքից: Նա հօ չէ կարող փայտը վայր գցել ձեռից:

—Քաղաքականութեան մէջ, սիրելի կապիտան, ասում էր գնդապետը, ամենագլխաւոր արժանաւորութիւնը զգուշութիւնն է:

—Ես միշտ այդ կարծիքին եմ եղել, գնդապետ, պատասխանեց կապիտանը, և եթէ յիշում ես, յաճախ պաշտպանում էի Բիսմարկին:

—Ասենք, աւելի յաճախ պնդում էիր, թէ անամօթ մարդ է նա:

—Ե՞ս, գնդապետ: Այդ հանգուցեալ Կուդելսկին էր այդպէս ասում, իսկ գլխաւորապէս Դոմէյկոն: Աստուած հոգիները լուսաւորի:

Յետոյ կապիտանը աւելացրեց.

—Հիանալի սպաներ էին նրանք, բայց քաղաքականութիւնից երկուսն էլ ոչինչ չէին հասկանում... թէև երկուսի դատաւորն էլ այժմ ինքը Աստուած է...

Վերջապէս՝ ձմեռը մեռաւ և կապիտանը:

Գնդապետը վիշտը պահեց սրտումը, ցոյց չը տուեց: Զբաղվեց թաղումով և չը թափեց ոչ մի կաթիլ արցունք: Բայց երբ դագաղի վրա որոտաց թնդանօթի հրաժեշտի ողջոյնը, ծերուկը յանկարծ օրօրվեց և վայր ընկաւ գնդակահարի նման:

Հազիւ աջողվեց ուշքի բերել նրան: Մի քանի րոպէ նա մնաց անշարժ, յետոյ, առանց ուրիշի օգնութեան, նստեց կառք և պատուիրեց տուն տանել իրան:

Հետևեալ օրը տեղական լրագիրներում լոյս տեսաւ յայտարարութիւն գնդապետի տան վաճառման մասին: Գնող շուտով գտնվեց և մի շաբաթ անց ծերուկը պատրաստ էր արդէն ընդմիշտ մնաս բարև ասելու հիւրընկալ Ֆրանսիային:

—Ձեռ ափսոսում, գնդապետ, որ մեզանից հեռանում ես, հարցրեց նրան վաճառման թղթեր հաստատող նոտարը:

—Ես ափսոսում եմ, և ոչ, պատասխանեց գնդապետը: Ափսոսում եմ, որովհետև դուք, Ֆրանսիացիներդ, ազնիւ, մեծահոգի մարդիկ էք, և ձեզ համար արժէ աբիւն թափել... Միւս կողմից էլ չեմ ափսոսում, որովհետև շատ բան է փոխվել ձեզնում... Ձեզնում այժմ միակ խօսակցութեան առարկան առևտրական գործերն են, շահը, խոհարարական արհեստը և զանազան զուարճութիւններ... Աւելի լաւ է վերադառնամ մեր ձիւն ու սառոյցի կողմերը... Այնտեղ ուրիշ մարդիկ են... մերոնք են... արիւնակիցներս են... նրանք կը հասկանան ինձ, ես էլ՝ նրանց... Իսկ ձեզնում, այստեղ, այժմ սարսափելի դատարկութիւն եմ զգում շուրջս...

Նոտարը թափ տուեց գլուխը, բայց տեսնելով

պէս յայտնի է, մրցանակի արժանանում են և ձեռագիր աշխատութիւնները, որոնց տպագրելը պարտաւորական չէ: Դուրս է գալիս, որ մէկը կարող է մի գիրք գրել, ներկայացնել յանձնաժողովին, մի հատ ղեկուցանողի օգնութեամբ ստանալ մրցանակ և լուռ ու մունջ նստել իր տանը: Բայց դրանից ինչ օգուտ մեր գրականութեան, մեր ժողովրդին:

Ցաւալի է որ Ցանձնաժողովին վարձատրած գործերէն՝ կրնանք ըսել թէ քնաւ օգուտ չէ քաղած հայ ժողովուրդը: Բացի այն մէկ քանի գործերէն, որոնք արդէն տպագրուելէ ետքը ժամուցուած են Ցանձնաժողովին, միւսները ամենամեծ մասամբ կը մնան ձեռագիր:

Որ Իզմիրեանցի կտակը նկատի ունի գրականութեան զարգացումը—այդ հարիւ թէ որ և է կասկածի առարկայ դառնայ: Այդ պատճառով անհրաժեշտ է պարտաւորեցնել մրցանակ ստացողներին, որ նրանք տպագրեն իրանց գործերը: Ուրիշ կերպ միտք չունի փող տալ մի աշխատութեան համար, որի բովանդակութիւնը յայտնի է գրողին և, օրինակ, մի Աշըգեանի:

Մի և նոյն ժամանակ լրագիրը բարձրացնում է մի հարց, որ նոյնպէս ուշադրութեան արժանի է: Ո՞վ չը գիտէ, որ Իզմիրեան մրցանակը նպատակ ունի միայն պատմագրական, տեղագրական և լեզուաքննական գրուածքները խրախուսելու: Դա մի նեղ, սահմանափակ շրջան է և մեր մէջ էլ, դժբախտաբար, թէև ամեն մէկը իրան հնագէտ և լեզուագէտ է համարում, բայց չէնքով չնորքով, խելացի ուսումնասիրութիւններ այնքան քիչ են, որ մատով կարելի է ցոյց տալ. այդպիսի գործերն էլ չեն ներկայացվում Իզմիրեան մրցանակի, որովհետև շատ քիչ կը լինեն իրանց պատիւը հասկացող հեղինակներ, որոնք սիրտ անեն ենթարկվելու զանազան Աշըգեանների դատաստանին: Եւ ահա Ցանձնաժողովը, տարեկան մրցանակաբաշխութեան գումարը ծախսած լինելու համար, 10 ոսկի մէկին է տալիս, 20 ոսկի միւսին ու այդպէս «լինցուցած» է համարում իր պարտքը: Դա նշանակում է փողը ջուրը գցել: Ամենալաւ միջոցն է ընդարձակել մրցանակաբաշխութեան ծրագիրը, թոյլ տալով, որ նրան մասնակցեն և այնպիսի մարդիկ, որոնք Նարեկացու գիրքը քննել և քքքրել չը գիտեն, բայց, օրինակ, կարող են մի լաւ դասագիրք կազմել:

Բան մը խորհելու է Աղա Իզմիրեանցի կամքին ըստ կարի համաձայն կարգադրութիւն մը ընելու յօգուտ ժողովրդային կրթութեան, և մենք վստահ ենք թէ բարեյիշատակ կտակարարին ոսկորները «պիտի խայտան» իր գերեզմանին մէջ, ինչպէս սովորութիւն էր ըսել հին բարի ժամանակներուն: Իսկ եթէ անկարելի կը համարուի այդ, փոխանակ ամէն տարի յուսպէտս վատնելու այդ գումարը, դնել թող պահուի և բարդուի մայր գումարին վրա, լաւագոյն երկասիրութիւններ վարձատրելու համար ապագային:

Եւ իրաւ, աւելի լաւ է մի քանի տարէնը մի անգամ լաւ վարձատրել մի լաւ գիրք, քան բարեկամութեան և խնամիութեան թելադրութեամբ ոսկիներ տալ այս և այն անշնորհք հեղինակին: Պէտք է վերականգնել Իզմիրեան գրական մրցանակի պատիւը, որ բոլորովին ընկած է: Բայց ո՞վ պիտի այդպիսի մի գործ կատարէ: Մի՞թէ չքանչաններով զարդարված էֆէնդիները, կամ Մկրեանն ու Աշըգեանը...

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

—

Յուլիսի 22-ին

Երկար երաշտ է: Ամիս ու կէսից աւելի է, ինչ անձրև չէ եկել քաղաքում և գաւառում: Արտերը ծարաւութիւնից այրվեցան: Հունձը փչացաւ: Այլաղանի հովիտը ներկայացնում է ողորմելի տեսարան. նա այրվում է, տոչորվում: Վարունգը երաշտից դառնացաւ ու փչացաւ:

Ցուսահատված ժողովուրդը դիմեց բարեպաշտութեան: Հանդանակվեց հաւաքարութիւնների մէջ 60 ր. այդ փողից 30 ր. ծախսվեց մատաղի համար, իսկ մնացածը պէտք է բաժանվի աղքատներին: Մի քանի կանայք նոյնպէս առանձին ժողովարարութիւն անելով՝ մատաղ մորթեցին և պատարագ մատուցել տուին: Պառաւներն ոտաբոբիկ գնում էին աղօթելու: Յուլիսի 18-ին մայր եկեղեցու մեծ զանգակի զողանջիւնը հրաւիրում էր բարեպաշտ հասարակութեան թափօրի: Այդ օրը հայոց հոգևորականութիւնը, երկու սեռի հասարակութեան խուռն բազմութեան մասնակցութեամբ, թափօր կատարեց քաղաքում: Տեսարանը սրտաշարժ էր: Բայց սրանից հոգևորականութիւնը գիշերները հսկում է կատարում մայր եկեղեցում: Բայց ա՜ւաղ: Ո՛չ ժողովրդի աղաչանքը, ոչ հոգևորականութեան աղօթքները և ոչ մատաղները ներգործութիւն չունեցան: Բնութիւնն անողոք է. անձրև դարձեալ չէ գալիս... Վրացիների մէջն էլ այժմ ժողովարարութիւն է լինում մատաղի և թափօրի համար:

Յուլիսն 10-ին Շիրակի անապատում մեծ հրդեհ պատահեց: Հրդեհը լափեց Բոդրիսխէվի և Փանիանի գիւղերի կալերը: Վնասը մեծ է: Այդ գիւղերը մնացին առանց հացի: Հրդեհը շարունակվում էր երկու օր: Ցարսկիէ-Կոլօդցիից ուղարկվեց զինուորների խումբը, որին և մեծ ջանքերից յետոյ աջողվեց հրդեհը հանգցնել: Հրդեհը տեղի է ունեցել և Վերին-Մաչխանի գիւղում. այրվել են տեղական նախկին տանուտէրի կալերը: Հրդեհը առաջացել է թշնամութիւնից: Ախաչէնի գիւղում նոյնպէս հրդեհ է պատահել: Հրդեհը հրի ճարակ է դարձրել 4 տուն և այրել 200 խոտի դէզեր: Հրդեհից վնասվածներից մի քանիսը եկել էին Սղնախ՝ օգնութիւն խնդրելու:

Ց. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ալէքսանդրօպոլ, յուլիսի 18-ին

«Մշակի» այս տարվայ № 127-ի մէջ Ալէքսանդրօպոլից Մ. ստորագրութեամբ թղթակցութիւնն առիթ է տալիս մեզ հրապարակ հանել մի քանի տխուր փաստեր և ցոյց տալ յարգելի հասարակութեանը, թէ ինչ տեսակ մարդիկ են այն պարոնները, որ յուլիսի 4-ի երէցփոխական ընտրութեան ժողովում աղմկում էին, ուզենալով իրանց ցոյց տալ գործի բարեկամներ:

Իմ եռամեայ ժամանակամիջոցը դեռ չը լրացած, տեղիս հոգևոր կառավարութիւնը, պաշտօնական թղթով հրամայում է բարեկարգիչ քահանային հրաւիրել ծխականներին և նոր երէցփոխի ընտրութիւն կայացնել: Այս հանգամանքը առաջանում է թիւրիմացութիւնից, ինչպէս և պարզվեց ժողովի մէջ: Եւ երբ եկեղեցում հաւաքված ծխականների մեծամասնութիւնը պահանջում է նախ իմ՝ և իմ նախորդ երէցփոխ Սրապեանի հաշիւները հրապարակ հանել, ապա ընտրութիւն կայացնել, մի քանի պարոններ, սրտի ցաւով պէտք է խոստովանել, իրանք իրանց ինտելիգէնտ հաշուող, աղմկում էին և աշխատում, ինչ հնարներով էլ լինի, հաշիւները յետաձգել և նոր ընտրութիւն կայացնել: Աւելորդ չեմ համարում այստեղ աւելացնել, որ յիշեալ աղմկող պարոնները, ամենքն էլ, քիչ բացառութեամբ, եկեղեցու հետ հաշիւներ ունեցողներ են: Մենք գիտենք, որ եթէ մէկը պաշտօնի է կոչվում ընտրութեամբ, նա պարտական է իր ընտրողներին հաշիւ տալ: Վեց տարի իմ նախորդն է երէցփոխութիւն արել, երեք տարի ես, դեռ ոչ մէկի հաշիւները հասարակութեանը չը տուած, ինչ միտք ունի նոր ընտրութիւն կայացնել: Ինչը տարվայ հաշիւները թողնել և նոր ընտրութեան ձեռնարկել, այդ ձեռնտու է միայն մի քանի մարդկանց և ոչ հասարակութեան:

Գալով լրատուի տուած տեղեկութեանը, որ իբր թէ ես ցանկանում եմ վերընտրվել, կասեմ՝ թող բոլորովին միամիտ լինի, երբէք ցանկութիւն չունեմ վերընտրվելու. չէ՞ որ իմ հրաժարականը արդէն կարդացվեց եկեղեցում բոլորի ներկայութեամբ: Իմ հաշիւները պատրաստ են, և շատ շուտով տպագրութեամբ լոյս կը տեսնեն ծխականներին ցրվելու համար: Ցանկալի է, որ իմ նախորդի և ապագայ երէցփոխների հաշիւները նոյնպէս տպագրվէին. թէ որքան արդարացի և անհրաժեշտ է իմ և իմ նախորդի հաշիւները հրապարակ հանել և հասարակութեան ցոյց տալը, այդ ստիպում է մոտ 12,000 բուբլու այն խոշոր տարբերութիւնը, որ նկատվում է մեր երկուսի հաշիւների մէջ:

Լրատուի տոկոսների ակնարկի վերաբերմամբ այսքանը կասենք, որ կոնսիստորիան ընդ միշտ արգելել է եկեղեցատատական դրամները տալ տոկոսով և պարտաւորեցրել է ինձ պահել միշտ առձեռն:

Երէցփոխ Աւետիս Տիգրանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի պոլիցիմէյստերի պաշտօնակատարը խստապէս հրամայել է, որպէս զի Աշչեան փողոցի վրա գտնվող գինետներից և դուխաններից դուրս քշվեն անառակ կանայք և գինետները փակվեն իր ժամանակին: Բացի դրանից պ. պոլիցիմէյստերը իր ուշադրութիւնը դարձրել է և Վէրայի այգիների վրա, ուր քէֆերը շարունակվում են մինչև լոյսը: Պոլիցիմէյստերի պաշտօնակատարը հրամայեց՝ 1) փակել գիշերվայ ժամի 1-ին բոլոր այգիները և հանգցնել լապտերները. 2) ոչ մի պատրուակով չը թոյլ տալ անառակ կանանց մտնել այդ այգիները և առհասարակ ոչ օրի չը թոյլ տալ թուղթ խաղալ այդ տեղերում:

—

«Times» լրագրին Կանէյից հեռագրում են, թէ Կովկասում գնակվող յոյն երկրագործները թոյլատրութիւն են խնդրում գաղթել Կրէտէ այն պայմանով, որպէս զի իրանց տրվեն մշակելու համար այն ազատ հողերը, որ թողել են մահմեդական գաղթականները: Արքայորդի Գէօրգի սկզբունքով ընդունեց այդ խնդիրը, բայց յանձնեց խորհրդին քննելու համար: Մօնոֆատցի գաւառում, Կանդիայի շրջանում, մահմեդականների բազմաթիւ գիւղերից հեռացել են թնակիչները: Այդ գիւղերը հասարակաց սեփականութիւն են յայտարարված և դրանք կարող են տրվել գաղթականներին: Կրետական բանկը փոխատութիւններ կը տայ հողեր ձեռք բերելու համար՝ կառավարութեան երաշխաւորութեամբ:

—

«С. Петер. Вѣд.» լրագրի ասելով, այն մասնաժողովը, որ կազմված է ֆինլանդական սենատի վարչութեան առակ գտնվող գործերից մի քանիսը տեղական նահանգապետների հայեցութեանը յանձնելու համար, նախ և առաջ զբաղվել է նահանգապետներին տրված հրահանգների ընդարձակմամբ և լրացմամբ: Բացի դիւանական գործավարութեան վերաբերեալ հարցերից, նահանգապետներին է յանձնվելու նաև մի քանի պաշտօնեաների նշանակելու իրաւունքը, որ մինչև այժմ պատկանում էր սենատին:

—

«Тифлисскій Листокъ» լրագրի խօսքով, Կովկասի բժշկական վարչութիւնը հաղորդեց Թիֆլիսի նահանգապետին, թէ ինքն հնարաւորութիւն չէ համարում թոյլ տալ բժշկապետ Զարգարեանցին՝ բանալ մանկական ապաստարան (ամբուլատորիա):

—

Սեպտեմբերին Բերլինում կայանալու է երկաթուղիական միջազգային կոնֆերէնցիա: Այդ կոնֆերէնցիային, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, կը մասնակցեն հաղորդակցութեան ճանապարհների և ֆինանսների մինիստրութիւնների ներկայացուցիչները:

—

«Судебная Газета» պարբերական հրատարակութիւնը թոյլատրութիւն է ստացել լոյս տեսնելու այսուհետև առանց նախնական ցենզուրայի:

—

«Казбекъ» լրագրի ասելով, օգոստոս ամսի վերջերում, գիտական հետազօտութիւններ անելու նպատակով, կը գան 120 ֆրանսիական գիտնականներ, որոնց թիւում 30 կին:

—

ԹԷՕԴՕՍԻԱՑԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 18-ին, կիրակի օրը, երեկոյեան ժամի 6-ին, կայացաւ Թէօդոսիայի հայոց եկեղեցիների երէցփոխի ընտրութեան երրորդ ժողովը, հայոց ուսումնարանի դահլիճում: Առաջին ժողովին նախագահող քահանան անգիտութեամբ զրկեց տաճկահայերին ընտրելու և ընտրվելու իրաւունքից (վերջը կոնսիստորիան յայտնեց, որ նրանք ընտրելու իրաւունք ունեն, զուրկ են միայն ընտրվելու իրաւունքից), ուստի նրանց հեռանալու պատճառով չը կայացաւ առաջին ժողովը: Երկրորդ ժողովը անաջող անցաւ. չը գտնվեց մէկը, որ յանձն առնէր երէցփոխի պաշտօնը... Վերջապէս երրորդ ժողովին արդէն ժողովականները միաձայն վերընտրեցին նախկին երէցփոխ Կոստանդին Արութեանին, որը երեք տարի շարունակ աշխատել է տեղիս եկեղեցիների և ժողովրդի օգտին, կառուցել է եկեղեցուն կից 12000 բուբլի արժողութիւն ունեցող մի տուն, որ տարեկան 1200—1300 ր. եկամուտ է բերում»:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Թիֆլիսի նահանգապետ Ի. Ն. Սվէչին Բօրչալուի գաւառից անցաւ մեր գաւառը և դուխոբօրների գիւղերն այցելելուց յետոյ՝ երէկ երեկոյեան, յուլիսի 25-ին, ժամանեց մեր քաղաքը և իջաւ գնդապետի յուզմունքը, աւելորդ համարեց հաժողել նրան: Հասկացաւ, երևի, որ երբեմն մարդուս բռնում է կարօտի մրրիկը ու տանում իրան մի տեղ... մի տեղ, որ եթէ կարողանար մտածել, թերևս կարծէր, թէ վերադառնում է դէպի իր հարազատ ծառը և նորից կպչելու է այդ ծառին:

Գնդապետը գնաց Պարիզ, ստացաւ թոշակը, ներկայացրեց դեսպանատանը իր վկայագիրները և անցագիր վերցրեց Ռուսաստան գնալու:

Բարեկամները հաժողում էին նրան յետաձգել գնալը մինչև ամառ, բայց ապարդիւն: Այն րօպէից և եթ, երբ նա վճռեց վերադառնալ հայրենիք, այնպիսի յուզմունք տիրեց նրան, որ նա հանգստութիւն չէր գտնում ոչ մի վայրկեան: Խօսակցութեան մէջ անուշադիր էր, հասարակութեան մէջ՝ կոպիտ: Եթէ լրագիր էր վերցնում ձեռը, նրան թւում էր, թէ լեհերէն է գրված: Ամեն տեղ նա սպասում էր ինչ որ մի բանի, կարծես ամեն բօպէ կարող էր գալ ինչ որ մի մարդ, որին դեռ չէր տեսել, բայց վաղուց սպասում էր: Բուլվարներում, լապտերների պայծառ լոյսով, ալէծուի և աղմկայոյզ ամբոխի մէջ՝ նա տեսնում էր խաղաղ, ձիւնապատ հարթութիւններ, հօրիզօնում սևին տուող անտառներ ու տեղ-տեղ փոքրիկ տնակներ յարդածածկ տանիքներով կամ խարխուլ խաչափայտեր ճանապարհի կողքին:

Նա կարծէք երկու հոգի ունէր այժմ. մէկը հայրենիքից էր բերել հետը, միւսը՝ օտարութեան մէջ էր սկզբնաւորվել ու զօրացել:

Վերջինը ինքնիշխան ղեկավարում էր նրան աւելի քան քառասուն տարի, բայց յանկարծ զարթնեց և սթափվեց նախկին երիտասարդական ոգին իր անթիւ յիշողութիւններով, չը հանդստացած ձգտումներով, յագուրդ չը գտած իղձերով: Նրա համար անտանելի էր մնալ Լիսնում, անհանդուրժելի՝ Պարիզում. նա տանջվում էր թատրոնում, խեղդվում՝ երկաթուղու գնացքում: Ցերեկվայ լոյսը խանգարում էր նրան մտածել, գիշերը նրան թւում էր, թէ մէկը վայր է գըցում իրան անկողնից, դուրս է քշում սենեակից, թէ ինչ որ մի բան հեկեկում է իր մէջ և աղաղակում սրտաճմլիկ ձայնով:

—Տար ինձ այնտեղ: Այնտեղ, մերոնց մօտ:

Գնդապետը հեռացաւ Պարիզից, նոյն իսկ առանց հրաժեշտի ողջոյն տալու իր բարեկամներից շատերին, և ճանապարհ էր գնում առանց կանգ առնելու, գիշեր ու ցերեկ, որպէս զի շուտ հասնէր հայրենիք: Նրա բարձր, ուղղաձիգ հասակը և ընորոշ կերպարանքը գրաւեցին գերմանացիների ուշադրութիւնը: Զննելով նրա թուխ, նիհար դէմքը և սպիտակ էսպանիոլ միրուքը, ենթադրութիւններ էին անում, թէ նա ֆըրանսիական դեներալ պէտք է լինի, գուցէ և մարշալ:

—Երևի գնում է Պետերբուրգ որոշ յանձնարարութեամբ,—չչնջում էին սրամիտ տեվտօնները:

Իսկ որովհետև գնդապետը ամեն բօպէ դուրս էր նայում պատուհանից, նրանք այն էլ հասկացան, որ նա ուսումնասիրում է գերմանական երկաթուղիների գծերը, և գուշակում էին, թէ պատերազմ է լինելու երկու սահմանների կողմից էլ:

Գնացքը լուսադէմին հասաւ սահմանին: Անցագրական ձևականութիւնների համար պահանջվեց մի քանի ժամ: Ճանապարհորդներից ոմանք ուտում-խմում էին, ոմանք՝ ննջում: Գնդապետը, որ չէր կարողանում ոչ ուտել, ոչ քնել, դուրս եկաւ զբօսնելու կայարանի մօտերքը:

Նա գնաց գծի ուղղութեամբ մօտ մի վերստ, դուցէ և աւելի: Սկսեց լուսանալ: Արևելքում երևաց մի լուսաւոր շերտ, որ հետզհետէ մեծանում էր, մինչև որ վերջապէս ամբողջ երկինքը ընդունեց կապոյտ ապակու գոյն, ծածկվելով մի և նոյն ժամանակ գորշ, սպիտակ և բաց-վարդագոյն ամպերով:

Կայարանի սպասարանի խեղդուկ մթնոլորտից յետոյ սառ քամին զովացրեց գնդապետին, բայց չը կարողացաւ հանգստացնել: Նրան թւում էր, թէ երբ նա դուրս գայ բաց դաշտը,—իր, հայրենի դաշտը,—կարօտը չի դիմանայ, դուրս կը թռչի նրա կրծքից, ինչպէս աղաւնին վանդակից: Բայց այդպէս չեղաւ: Նա ամենևին հանգստութիւն չը զգաց և մնաց ապշած: Հօրիզօնը, որ այնքան ընդարձակ էր երբեմն, այժմ թւում էր սահմանափակ, անձուկ: Անտառներ չեն երևում. տեղ-տեղ ցցված են միայն գործարանների մխացող ծխնելոյզները: Չեն երևում խրճիթներ, ոչ էլ փոքրիկ պարտէզներ խրճիթների մօտ. միայն բարձրանում են մռայլ աղիւսաշէն տներ: Նոյն իսկ քամին, փոխանակ սօսաւելու ուռենու սաղարթի մէջ, պտոյտ-պտոյտ է գալիս սիւների անվերջ շարքերի մէջ և նեռում է հեռագրաթելերի արանքին, մոլորված որբ երեխայի նման:

Չէ՞, սա արդէն այն երկիրը չէ, որ նա թողեց կէս դար առաջ:

Հնչեց ազդարար զանգակը: Գնդապետը հազիւ ժամանակ ունեցաւ տեղ բռնելու վագոնում, և գնացքը շարժվեց:

Ամբողջ ճանապարհին ծերունին ուշադրութեամբ դիտում ու զննում էր ամեն ինչ,—նա ուզում էր գտնել գտնէ մի բարակ թել, որ կարողանար կապել ներկայ իրականութիւնը անցեալի յիշողութիւնների հետ: Զուր աշխատանք: Բոլորովին ուրիշ աշխարհ է ապրում նրա հոգու խորքում. աչքի առաջինը ամենևին այն չէ: Գիւղացիք կապա չեն հագած. հրէաների գլխին ադուէսամորթ գլխարկներ չեն, տների կողքին ծառեր չը կան, դրսևը՝ անտառներ: Չէր կարող պնդել նոյն իսկ, թէ թռչուններն էլ չեն փոխել իրանց ձայնը:

(Կը շարունակվի)

քաղաքային դպրոցում։ Քաղաքային աւագն ու իր օգնականը աղ ու հացով դիմաւորեցին։ Այսօր առաւօտեան, տեղական աստիճանաւորներին ընդունելուց յետոյ, պ. նահանգապետը այցելեց գաւառական և քաղաքային վարչութիւններն ու բանտը և ապա ճաշից յետոյ ճանապարհվեց Ախալցխա։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Երէկ, ամսոյս 20-ին, քաղաքային կլուբի ձեռներին դահլիճում կայացաւ երգիչներ պ.պ. Մամաջանի և Նալբանդեանի կօնցերտը։ Դահլիճի կէսից աւելին լիքն էր ամենաընտիր հասարակութեամբ։ Երիտասարդ երգիչների կօնցերտը բաղկացած էր երկու մասից, որոնց մէջ մտնում էին նշանաւոր երաժշտների ստեղծագործութիւններից մի քանի յայտնի կտորներ։ Հասարակութիւնը անվերջ ծափահարութիւններով բեմ էր կանչում երգիչներին։ Առանձին ազդութեամբ անցան Կամպանի դուէտը «Въ любви вся жизнь» և «Паяцы» օպէրայի յայտնի արիան։ Ինչպէս լսում ենք, երեք օրից յետոյ կը կայանայ նրանց երկրորդ կօնցերտը, որից յետոյ նրանք ուղևորվելու են դէպի Կարս։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Զը տեսնված շոքեր են անում. ջերմաչափը ստուերում ցոյց է տալիս 30 աստիճանից բարձր, իսկ արևի տակ 45 և աւելի։ Շոքերի սաստկանալով օր օրի վրա պակասում է ջուրը և նորից վարժութեան մէջ է մտնում մեզանում ջրի համար սովորութիւն դարձած տուր ու դմբոցը և միմեանց գլուխ ջարդելը, որոնց ժամանակ պատահում է և մարդասպանութիւն։ Անցեալ շաբաթ Փարաքար գիւղում ջրի պատճառով սպանվել է մի երիտասարդ. սրանից 2—3 օր առաջ Քալաբայ գիւղում սպանվել է երկրորդը։ Սպանութեան և անբաւականութեան գլխաւոր պատճառը ոչ այնքան ջրի պակասութիւնն է, որքան ջրի գործածութեան անկանոնութիւնը։ Մինչդեռ խեղճ գիւղացու ձայնը լսող չը կայ, մեր իշխանները և տուզերը անվախ կտրում են գիւղացու ջուրը և ջրում իրանց այգին կամ բամբակը։ Մեր հասարակութիւնից մի քանի անձինք անցեալ շաբաթ ներկայացան Վեհափառին և խնդրեցին միջոցներ ձեռք առնել գաւառի կտրօտ գիւղացիների համար ջուր բերել տալու, իսկ Վեհափառը սովորական «տեսնենք» և «խորհենք» բառերով է ճանապարհ դրել հասարակութեան ներկայացուցիչներին։ Կրկին անգամ յիշեցնում ենք մեր հասարակութեան, որ եթէ կամենում էք ջուր ունենալ, պէտք է հասարակական ժողովներով ընտրէք ձեզ համար հաւատարմատարներ ամեն մի հասարակական համայնքից առանձին-առանձին, նշանակելով նաև մի որոշ գումար՝ ջուր բերելու հարցը կանոնաւոր մշակելու համար, որպէս զի հաւատարմատարները միջոց ունենան դիմելու գաւառապետին և նրա օգնութեամբ առաջ տանեն ջուր բերելու հարցը։ Թող համողվի հասարակութիւնը, որ առանց գաւառապետի միջամտութեան և օգնութեան, ուրիշ ոչ ոք չի աջողեցնի ջուր բերել տալու հարցը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻԶՄԻՐԵԱՆՑ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

(Կ. Պոլսի լրագիրներից)

—

Սրբոց Թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ տօնին առթիւ երէկ առաւօտ Ղալաթիոյ եկեղեցւոյն մէջ եկեղեցական հանդիսաւոր արարողութիւններ տեղի ունեցան, որոնց նախագահեց Ս. Պատրիարք Հայրը։ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ արդէն հաւախմբուած էին եկեղեցականներ և աշխարհականներ, երբ Ս. Պատրիարք Հայրը եկաւ բազմիլ նախագահական աթոռը, իր շուրջը ունենալով Կրօն. Ժողովոյ ատենապետները Յովհաննէսեան Տ. Գրիգորիս և Մանկունի Տ. Վահրամ Սրբազանները և ուրիշ եկեղեցականներ։ Աշխարհական դասէն ներկայ էին Քաղ. Ժողովէն Եուսուֆեան Տիգրան, Գարակէօզեան Գրիգոր, Տէր Ներսէսեան Տիգրան էֆէնդիները, Ուսումնական Խորհրդոյ անդամներէն ոմանք, Հ. Գաբրիէլ վարդապետ Մէնէվիշեան, ազգային գրագէտներ, ուսուցիչներ, հրապարակագիրներ և լրագրաց ներկայացուցիչներ։ Գրագիտուհիներէն ոմանք ալ ներկայ էին այս տարի։ Ժամը 3-ն էր երբ սկսաւ հանդէսը։ Յանձնաժողովոյ անդամներէն ներկայ էին Երէցեան Գէորգ Սրբազան, Մկրեան Յովհաննէս աւագ քահանայ և Նորաշունկեան Վասիլ. Գաբրիէլ էֆ. և Էսաեան Վահան էֆէնտի։

Ներկայացեալ գրքերն են հետևեալները։ 1.—«Աղուանից երկիր և դրացիք և Արցախ» երկուհատոր, Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցի։ Այս գործը յանձնուած է Երուսաղէմի լուսաբարձ Պատրիարքարանի Խապաեան Սահակ եպիսկոպոսի քննութեան, որ գնահատած է աշխատութիւնը, և ինք ալ բաւական ժամանակ այն կողմերը պտտած ըլլալով, գոված է հեղինակին աշխատութիւնը։

2.—«Համեմատական հետազօտութիւն մեր յարաբերաց, Բաբելացւոց աւանդութիւններուն և Վանայ արձանագրութեանց վրայ» և «Պսակ մը Ֆրիտրիխ Միւլլերի գերեզմանին վրայ» 10 ական էջէ բաղկացեալ տետրակներ, որոնք արտատպուած են «Բազմավէպ» հանդէսէն։ Գործ Կ. Պասմաճեանի, տպ. ի Վենետիկ ի Վանս Ս. Ղազարու։ Այս գործ անբաւական նկատուելով քննութեան իսկ չէ յանձնուած։

3.—«Հայերէն ուսումնասիրութիւններ», ձեռագիր Պ. Գրիգոր Վանցեանի Տփղիսէն։ Այս գործը յանձնուած է Հ. Գաբրիէլ Վ. Մէնէվիշեանի որ «նիւթն ու նպատակը լաւ է» ըսած է. «բայց լաւ մշակուած և ուսումնասիրուած չէ» և արդէն ինք ուսանող ըլլալով ուսանողութեան առաջին տարիներուն աշխատութիւններն են ատոնք։

4.—«Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս» երկհատոր գործ։ Այս գործին քննութիւնը նախ՝ Մամուրեան Մատթէոս էֆէնտիի յանձնուած էր, բայց սա իր տկարութեան պատճառաւ հրաժարելով, Գուրգէն էֆ. քննած է։

5.—«Հին օրեր և այն օրերուն մարդը, Պրուսացի Տերոյենց Յովհաննէս պատուելի», ձեռագիր Յարութիւն էֆ. Մրմրեանի։ Կենսագրական այս գործին քննութիւնը՝ յանձնուած էր թէև Ստեփան փաշայի, սակայն իր առողջական վիճակը մէջ բերելով հրաժարեր է։ Յետոյ այս գործը յանձնուեր է Աշրգեան Խորէն սրբազանի։

6.—«Նախափորձ համառօտ պատմութեան իսպանական գարգացման Հայոց հին ժամանակներէն մինչև մեր օրերը 1875» ձեռագիր տոքտոր Նազարէթ էֆ. Տաղավարեանի։ Այս գործին քննութիւնը յանձնուեր է Պէրպէրեան Ռեթէոս էֆէնդիի։

Յանձնաժողովը նկատելով որ այս տարի ամբողջ մրցանակը մէկ հոգիի չը պիտի կրնայ տրուիլ, որոշած է ի քաջալերութիւն հեղինակաց այդ մրցանակը երեքի բաժնել, այսպէս՝ Մակար եպիսկոպոսի հեղինակութեան համար 30 ոսկի, Հ. Քոսեանի 20 և Մրմրեան Յարութիւն էֆէնտիի 15 ոսկի։

Տեղեկագրին ընթերցումէն յետոյ Եուսուֆեան Տիգրան էֆ. կտակներու վրա հակիրճ տեսութիւն մը ըրաւ։ Ս. Պատրիարքը խօսք առաւ և երկար տեսութիւն մը ըրաւ կտակներու մասին՝ ընդլայնելով Եուսուֆեան էֆէնտիի խօսքերը։ Յաւ յայտնեց թէ կտակին գործադրուելէն, այսինքն 13 տարիէ ի վեր չէ ներկայացուած գործ մը՝ որ յատկապէս մրցման համար պատրաստուած ըլլայ։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Վան, յուլիսի 10-ին

Մեր դպրոցական քննութիւնները լմնցան։ Կարժէ համառօտ ակնարկ մը նետել Վանի կրթական վիճակին վրա՝ հասկնալու համար թէ՝ ինչ արդիւնք կը ստանանք և ուր կը դիմենք։ Մեր կրթական գործը ընդհանուր առմամբ շատ խեղճ վիճակ մը ունի, որուն վրա շատ աւելի դուրգուրալու պէտք ունենք այժմ՝ քան երբ և իցէ ատեն մը։

Առաջին տեղը հայկական որբանոցը գրաւած է՝ պ. Համբարձում Երամեանի տնօրէնութեամբ, որ 21 տարուան հաստատութիւն մըն է, նախ՝ իբրև որբանոց և ապա իբրև անհատական դպրոց շարունակուելով։ Հիմա ալ դեռ 100-էն աւելի աղքատ աշակերտներ ունի ձրի։ Քանի որ մեր ծխական դպրոցները թաղական աղաներու քմայքէն կախուած են, անոնցմէ բան մը սպասել կարելի չէ. ատոր համար հայկական որբանոցը կեդրոնական բարձրագոյն դպրոցի մը դերը կը կատարէ մեր մէջ՝ իր շուրջը խմբած ըլլալով Վանի ուսուցչական ուժերու կարող մասը։ Դժբախտաբար, այս տարի, դպրոցի բիւրժէն 90 լիրայի (800 ռուբլի) բաց մը կը թողու, զոր հայթայթելու անկարելիութիւնը մինչև իսկ դպրոցին փակման պատճառն կրնայ ըլլալ, ինչ որ մեծ հարուած մըն է մեզի, եթէ իրականանայ։

Հայկական որբանոցէն անմիջապէս ետք միսիոնարաց ընդարձակ դպրոցն է աչքի զարնողը, ուր Ներսէս սրբազանը, ներկայ գտնուելով քննութեան վերջին մասին, քարոզ մը խօսեց՝ անկեղծ շնորհակալութիւն յայտնելով իր բարեկամ Մր. Բէյնօլտսին՝ դրուագելով միանգամայն դպրոցին յառաջադիմութիւնն ու տնօրէնին զուտ մարդասիրական անկեղծութիւնը...

Արդ, մեզ կը մնայ «ի խորոց սրտի» խնդակցիլ սրբազանին, որ կեղծաւոր անկեղծութիւն մը ունի պահեստի, և երբեմն, այս տեսակ պարագաներու մէջ, երևան կը հանէ... Մինչ, ընդհակառակն, սրբազանը, գալուն պէս, նպաստի գործը բաժնեց բողոքականներէն՝ կեղծաւոր, թագուն նպատակի տէր անուանելով զանոնք. իսկ այժմ հանդիսաւոր կերպով կը դրուագէ ու կը շոյէ՝ տեսնելով միանգամայն անոնց տուած չոր ու ցամաք կրթութիւնը կրօնական միակողմանի սեղմումով մը և աղատախիտ անունին տակ—ապուշ, մտքով կաշկանդուած աստուածաբաններ։

Իսկ մինս դպրոցներու մասին աւելորդ է խօսել՝ քանի որ անոնց մասին խօսուած է ուրիշ անգամ։ Ուրեմն, բաւական թուով ընթացաւարտներ ունենք երկսեռ, որոնք, իբրև թարմ ուժեր, մէյ-մէկ ասպարէզի մէջ պիտի նետուին։ Թողունք օրիորդներ, վստահ եղէք, որ մեր ոչ մէկ երիտասարդը արհեստի պիտի երթայ,—ուսումնական մարդը արհեստ կը սորվի մի եա,—այլ կամ խեղճուկ գրագիր մը, կամ աւանդական վարժապետ մը պիտի ըլլան և կամ պարապ պտտին։

Նիւթերու կողմանէ ալ շատ հարուստ են մեր դպրոցները։ Չէք հաւատար, ահա մտիկ ըրէք թուեմ—հայերէն, թուրքերէն, ֆրանսերէն, անգլիերէն, կրօն, եկեղեցական պատմութիւն, ալջեբրա-թուաբանութիւն-մաթեմատիք, աղգային և ընդհանուր պատմութիւն, մատենագրութիւն, աշխարհագրութիւն (բնական և քաղաքական), բնական գիտութիւն, բնալուծութիւն, աստղագիտութիւն, ութիւն, ութիւն, ութիւն և մասամբ նոցին... Հիմա համոզուեցաք, որ կը յառաջադիմենք կոր... Նիւթերով։ Հապա սա անգլիերէնը, ֆրանսերէնն ու թուրքերէնը, որ մեր աղջիկները կը սորվին... Չեմ գիտեր մեր մայրերն ալ պօլսեցի մայրերուն պէս պիտի ըսեն «աղջիկս չաթըր չաթըր ֆրանսղա կը խօսի կոր»... Ափսոս, որ աղքատութիւնիս կարգելէ դաշնակ ունենալէ, մեր «լէդի»-ներու և «մատուազէներու» փափուկ մատներուն տակ թրթռալու համար...

Ընդհանրապէս, մանչ թէ աղջիկ աշակերտներու հայերէն շարադրութեանց, կամ աւելի ճիշդը՝ անոնց «թէզերու» մէջ, մինչ նկատելի է ճիգ մը, շողշողուն, պսպղուն բառերու կուտակումով, փայլուն, ճկուն դարձուածներով, իդէալական-փիլիսոփայական ֆրազներով՝ բանաստեղծական հովերու և թռիչներու մէջ պարուրուած...

Ուշադրութիւնս գրաւեց մանաւանդ 18 տարեկան պատանիի մը մէկ շարադրութիւնը, որուն մէջ բանաստեղծութիւնը, փիլիսոփայութիւնը, գեղարուեստը, գրականութիւնը, գիտութիւնը սարաչաւ մրցում մը կընէին՝ Վիքթոր Հիւգօի, Գէօթէի, Շէքսպիրի, Շիլլէրի, Ալիշանի և այլն անուններով ու վկայութիւններով... Մինչ ես կը վախնամ, թէ այդ հսկաները լոկ անունով միայն ծանօթ են այդ պատանիներու ուսուցիչներուն...

Չեմ գիտեր, յատկապէս փիլիսոփա-բանաստեղծները կը պատրաստուին մեր դպրոցներուն մէջ, թէ անոնցմէ աւելի բան մը—դրական, ռէալիստ երիտասարդներ՝ որոնց այնքան պէտք ունինք մենք...

Մեր քննութիւնները հանդիսաւոր եղան, որոնց շատ շատ անդամներ ներկայ եղան կուսակալը, ուրիշ միւրք մեծ պաշտօնեաներ, առաջնորդը և քաղաքիս ինտելիդենտ դասակարգը—երկսեռ... յառաջդիմութիւն... Հապա այն ճառերու շարքը, անհամուսն ու երկայն շարքը, որոնց մէջ ամեն բան կար ու բան մը չը կար, և որոնք մեր քննութեանց հանդէսներուն անհամ աղն ու պղպեղը, անշուք զարդն ու պաճուճանքը կը կազմէին, և որոնք, եթէ հաւաքելու ըլլանք, Սիսուանի մը չափ կըլլան անպատճառ... Խեղճ Ալիշան...

Հապա ձեր Ներսէսեանն ու ճեմարանը, որոնցմով կը պարծիք դուք, կրնամ աչք տալ մերոնց, մեր «ութիւններուն» ու մեր հանդէսներուն, կրնամ մեզ հաւասարիլ...

Եւ, ի լրումն ամենայնի, ինտելիգենտ շրջանակին մէջ կերևէին լրագրական թղթակիցներ այ, որոնք աչք ու ականջ կտրած, քննութիւններուն մտիկ կընէին, մանաւանդ անոնցմէ մէկը՝ «Արևելք» հանձարեղ, բեղմնաւոր թղթակիցը, հէր Բիսմարկը, ինչպէս քանի մը տեղեր և քանի մը անդամներ նկատեցի, վեհափառօրէն կը քնանար նստած տեղը—անշուշտ իր թերթին աւելի լաւ նկարագրելու համար քննութիւններուն արդիւնքը...

Եւ ո՞վ կրսէ, որ մենք չենք յառաջադիմեր... Ապացոյցներ չեն այս թեզերը, ճառերը, «ութիւնները», երգերը, ֆանտազիական հանդէսները և մանաւանդ... թղթակցական քունը... Այժմ ձեզ կը թողում դատել, թէ «ինչ արդիւնք կը ստանանք և ուր կը դիմենք»...

Խորէն—Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Neue Freie Presse» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից յուլիսի 17-ից (29), որ գերմանական մի յանձնաժողով, ընդհանուր հիւպատոս Շտէմբրէխի նախագահութեամբ, ճանապարհ ընկաւ տեղն ու տեղը քննելու անատոլիական երկաթուղին Պարսից ծոցի վրա գտնվող Բասսորի հետ կապելու հարցը։

—Լօնդօնում պատող լուրերին նայելով, անգլիական կառավարութիւնը դիտաւորութիւն ունի բաւարարութիւն տալ Կիպրոսի բնակիչների ազգային իղձերին, առանց յանձնելու Կիպրոս կղզին Յունաստանին, ինչպէս փափագում են կիպրիօտները։ Այդ բաւարարութիւնը կայանում է նրանում, որ իբր թէ Անգլիայի օգնութեամբ Կիպրոսը կը միացվի Կրետէին և կը կազմի մի անկախ իշխանութիւն արքայազն Գէօրգիի կառավարութեան ներքոյ։

—Լրագիրների ասելով, իտալական կառավարութիւնը մտադիր է առաջիկայ աշնան ուղարկել Կրետէ երկու պատերազմական նաւեր։

—«Times» լրագրին հեռագրում են, որ իտալական հնագիտական ինստիտուտի դիրեկտոր Գոլբէրգ գնացել է Կրետէ՝ պեղումներ անելու Գօրտին և Պրինիա հին քաղաքներում, Մալէվիզիում։

—Ունգարացիներին մեծ անհանգստութիւն է պատճառում սլովակների մէջ նկատվող ազգային շարժման սկզբնաւորութիւնը։ «Nar. Nov.» լրագիրը գրում է, դիմելով ունգարացիներին. «Մենք, սլովակներս, ոչինչ վատ բան չենք անում, ձգտելով ձեռք բերել մեզ պատկանող իրաւունքները։ Չէ՞ որ օրէնքները հաւասար են ամենքի համար, հապա ինչու՞ պէտք է մենք կրենք միայն ծանրութիւնները։ Մենք կատարում ենք մեր հայրենական պարտականութիւնները, վճարում ենք բոլոր տուրքերը և զոհում ենք ընդհանուր հայրենիքի համար մեր արիւնը, ինչու՞ ուրեմն մենք չը պէտք է իրաւունք ունենանք ձայն բարձրացնել այնտեղ, ուր հարցը մեր վիճակի մասին է»։ «Մենք արդէն այնքան զարգացել ենք, շարունակում է լրագիրը, որ հասել ենք ինքնագիտակցութեան, և այլ ևս չէ կարելի մեզ առաջ քշել իբրև ոչխարների մի հօտ։ Մենք գիտակցում ենք, որ Ունգարիան մեր հայրենիքն է, և մենք սիրում ենք նրան աւելի քան այն հարիւր հազար տղրուկները, որոնք գերութեան են մատնել մեզ։ Թող իմանան ունգարացիք, որ վանդի բոպէին մենք կը կարողանանք միշտ և ամեն տեղ պաշտպանել մեր կեանքն ու գոյքը և մեր հայրենիքը. դրա համար հարկաւոր չէ ամենևին, որ մենք հրաժարվենք մեր ազգութիւնից։ Մեր և ունգարացիների մէջ միշտ տիրել է համերաշխութիւն; և երբէք մեր սրտերում չէ եղել և այժմ էլ չը կայ ատելութիւն դէպի ունգարացիները, բայց մեր սրտի խորքից մենք ատում ենք և հակառակ ենք այն ամենին, որոնք կամենում են մեզ ունգարացի դարձնել։ Երբէք չի աջողի նրանց այդ»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

27 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր ժամի 11-ից յետոյ հրդեհ սկսվեց ծովային կադետների դպրոցում։ Սկզբում կպաւ վերնայարկը. յետոյ կրակը անցաւ դիտանոցը, որը սաստիկ փլասվեց։ Հրդեհաշէջների և քաղաքապետի ջանքերի շնորհիւ աջողվեց հրդեհը սահմանափակել։ Հրդեհի տեղը ժամանեցին՝ Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ և ծովապետ Ավելան։

ՊԱՐԻԶ։ Դէժանժ և Լաբօրի փաստաբանները յայտնում են, որ գոհ են երէկվայ օրով։ Լրագիրները մեծ նշանակութիւն են տալիս նոր ինը վկաների կանչելուն։ Նացիոնալիստները գտնում են, որ առաջին նիստի տպաւորութիւնը բոլորովին անպատշաճ էր Դրէյֆուսի համար, մինչդեռ բէվիզիոնիստները տպաւորութիւնը գերազանց են համարում։

ՐԷՆՆ։ Դրէյֆուսին բանտից լիցէյ անցնելու համար այսօր ձեռք են առնված մի և նոյն զինուորական միջոցները, ինչպէս և երէկ։ Ժամի 6½-ին դանլիճումն էին արդէն դատարանի անդամները, Դրէյֆուսի փաստաբանները՝ Դէժանժ, Լաբօրի և Գելդ, ինքը Դրէյֆուս, նաև Շաժուան, որը բերել է գաղտնի դոսսիէ։

ՐԷՆՆ։ Բազմաթիւ հետաքրքրվողներ, որոնք ժողովվել էին լիցէյի մօտ, բայց որոնց ոստիկանութիւնը հեռու էր պահում, համարեա չը նկատեցին Դրէյֆուսին, երբ նա անցաւ։ Նրանք ցրվեցին հիասթափված։ Նիստը տևեց առաւօտեան 6 ժամ 30 րոպէից մինչև 11 ժամ 45 րոպէ կէսօրից առաջ, անպայման դռնփակ։ Ներկայ էին միայն Դրէյֆուս, նրա փաստաբանները և դատարանի անդամները։ Նիստը նուիր-

վեց զինուորական մինիստրության գաղտնի դոսսիէյի քննության, որի մասին բացատրություններ էր տալիս Շամուան։ Նիստը յետաձգված է մինչև վաղը։

28 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Ժողովրդական լուսաւորության մինիստրի շրջաբերականը ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին։ «Իմ նախագահութեամբ և ուսումնարանական շրջանների հոգաբարձուների և հավալսարանների ռեկտորների մասնակցութեամբ ներկայ տարվայ յունիսին տեղի ունեցող խորհրդակցութիւնների ժամանակ քննվում էր, ի միջի այլոց, տեսչութեան ներկայ դրութեան հարցը հավալսարաններում և նրա գործունէութեան ուղղութեանը։ Ինչպէս պարզվեց խորհրդակցութիւններին մասնակցող անձանց դիտողութիւնների և հայեացքների փոխանակութիւնից, տեսչութեան ներկայացուցիչների այժմեան դրութիւնը լիապէս հավապատասխան չէ իր կոչմանը, մի բան, որ մանաւանդ աչքի է ընկնում ուսանողների մէջ սկսվող որ և է յուզման դէպքում։ Խաղաղ ժամանակ քիչ թէ շատ բաւարար կերպով պահպանելով կարգը, տեսչութիւնը, սակայն, այնքան հեղինակութիւն չունի, որ կարողանայ ազդել ուսանողների վրա յուզմունքների ժամանակ. թէպէտ և այդ տեղի է ունենում այն պատճառներից, որոնք մեծ մասամբ դուրս են տեսչութեան իշխանութիւնից, բայց մասամբ դրա պատճառն այն է, որ տեսչութիւնը բաւականանում է միայն արտաքին կարգի վրա հսկելով հավալսարանի պատերում, և սրանից չէ առնում ուսանողների պանդուխտ պահանջները ու կարիքները և առհասարակ հագ չէ տանում նրանց հետ բարոյական կապ հաստատելու մասին։ Այդ պատճառով ես ցանկալի եմ համարում, որպէս զի սրանից յետոյ տեսչութեան ներկայացուցիչները չը բաւականանան միայն արտաքին կարգը պահպանելու վրա հոգալով, այլ պարտաւորվեն հոգ տանել ուսանողների մասին, օգնութիւն հասցնելով նրանց այն միջոցներով, որ ունի տեսչութիւնը, այն է՝ պարապմունքներ գտնել, ցոյց տալ յարմար բնակարաններ և ճաշարաններ, բժշկական օգնութիւն հասցնել հիւանդացողներին և այլն։ Այդ նպատակով, ի միջի այլոց, ես անհրաժեշտ եմ համարում առանձին ուշադրութիւն դարձնել տեսչի օգնականների զգոյշ ընտրութեան վրա և նշանակել այդ պաշտօններում հավալսարանական բարձր ուսում ունեցող անձանց, որոնք պէտք է ունենան այն ֆակուլտէտի մասնագիտութիւնը, որ ֆակուլտէտի վրա նշանակվում են, որպէս զի նրանք կարողանան ուսանողների հետ չփվել նրանց գիտական զբաղմունքներին վերաբերեալ հարցերում։

«Բացի վերոյիշեալից, չէ կարելի ուշադրութիւն չը դարձնել տեսչութեան ստորին պաշտօնեաների վրա, որոնց դէմ վերջերս յայտնվում էին ոչ անհիմն գանգատներ։ Մինիստրութեան մէջ եղած տեղեկութիւնների համեմատ, մի քանի հավալսարաններում այդ պաշտօնեաներին տեսչութիւնը տալիս էր այնպիսի պատասխանատու և փափուկ յանձնարարութիւններ, որոնք, մի կողմից չեն համապատասխանում նրանց զարգացմանը և պաշտօնական դիրքին, իսկ միւս կողմից առիթ են տալիս զեղծումներին։ Դրանք են, օրինակ՝ հսկողութիւն ուսանողների վրա դասամիջոցներին, գրել թէ ուսանողը այցելել է դասախօսութիւնը թէ ոչ, և այլն։ Զը հաւանելով այդպիսի կարգը, ես անհրաժեշտ եմ համարում արգելել սրանից յետոյ այդպիսի յանձնարարութիւնների տալը տեսչութեան ստորին պաշտօնեաներին, որոնք ոչ մի դէպքում չը պէտք է կատարեն տեսչի օգնականների վրա դրված պարտաւորութիւնները։»

ՐԷՆՆ։ Զինուորական դատարանը ծանօթացաւ այսօրվայ նիստում դաղտնի dossier-ի միայն մի մասի հետ։

Դրէյֆուսի առողջական դրութիւնը, լուրերին նայելով, անհանգստութիւն է պատճառում նրա ընտանիքին. նա, բացի կաթից, ուրիշ ոչինչ կերակուր չէ կարողանում ընդունել։

ՊԱՐԻԶ։ Կռվարեան կղզիների վրա անկարգութիւններ սկսվեցին։ Մարսելդայից ազդարար նաւ է ուղարկված այնտեղ։

ՄԱԴՐԻԴ։ Տօրրալ արդարացրված և ազատված է բանտից։

ՄԱԴՐԻԴ։ Հանրապետականների մի խումբ Կաստէլիօնում մօտեցաւ բանտին՝ պահանջելով արձակել բանտից կիրակի օրը անկարգութիւնների համար բանտարկվածներին։ Բանտապահ զինուորները հրացաններ արձակեցին օդի մէջ։ Զօրքերը միջամտեցին և ցրվեցին ամբոխը։ Մեծ յուզմունք է տիրում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
„ԼՈՒՄԱՅ“
գրական հանդիսի 1898 թ. երկրորդ գիրքը և ուղարկվեց բոլոր բաժանորդներին։
Բացված է 1900 թ. (V տարի) բաժանորդագրութիւնը։ Տարեկան 2 գիրք. բաժնէգին 3 ր.։
Հրատարակիչ Գիւտ ա. ք. Աղանեանց
1—3

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԷՐՑՓԷԼԴ
Մադերեան փողոց, № 5.
որ մասնագէտ է կաշու, միզասեռական (ելեկտրականութեամբ), վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ
Ընդունում է հիւանդներին ամեն օր
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5— 8 ժ.
15—60

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ
Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը։
Գանձվկայա փողոց, տուն Մարգարովի, № 31։
(Ե. Հ. Շ.) 57—100

ՊՐՕՎԱՆՍԻ ԻԻՂ
ՑԱՑՏՆԻ ԿԵՕԼԵՐԵԱՆ
պատրաստած Նիցցայում առանձին ցուցմունքով։ Ծախվում է
ԱՄԵՆ ՏԵՂ ԵՒ ԲՈԼՈՐ
յայտնի վաճառականների մօտ։ Այդ իւղը պատրաստվում է միայն մայիս ամսում և միայն նոր ժողովված ու բոլորովին հասած և ընտիր ձիթապտղից։
M. 75287 (10)

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
ԲԱԳՈՒ
ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ
Սկսել է իր գործունէութիւնը,
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՎԻՐՆԵՐ՝
ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոգեկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն։ Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ բազում հարկաւոր գործիքներ։
Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի-Հէյբաթում։
Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տէլէֆոն № 749), գործարան. տէլէֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տէլէֆոն № 451. (Ե. Հ. Շ)

Ա. ՐԱԼԼԻ ԵՒ ԸՆԿ.
ՀԱՑԹԱՑԹՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱԼԱՏԻ
ՕԾԱՆԵԼԻՔ
ԼԷՎԿՈՅ
Veillet blanc
ՀՈՏԱԼԷՏ ՋՈՒՐ ՍԱՊՈՆ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՋՈՒՐ ՊՈՒԴՐԱ.
Москва, Кузнецкій мостъ. Тверская, д. Спиридонова. С.-Петербургъ. Новскій, 18: Садовая 25.
M. 59807 (Չ.)


ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ
Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։
ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ
ԳԱԶՕ-ՇՈԳԻԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
Ամեն տեսակ էլէկտրօտէխնիական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ
Ինժեներ Ն. Բ. Պասաէկի
Тифлисъ, Михайловская ул. № 116,
Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.
ՏԷԼԷՖՕՆ № 642.
ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԻԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ
ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ
իւրքիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։
ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
երկաթէ կամուրջներ
և տնակներ։
ՑԷՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Ե. Հ. Շ.) 24—100

ЖЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ ДЕ РОЗЬЕ
20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСК. ЧАСТЕЙ
ЖЖЕНЫЙ КОФЕ
С. СІУ и К°
ПРОДАЖА ВЕЗДѢ
7—26
M. 35941

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, (4/16 օգոստոսի) ՄԻՆԴՐԵԼԻ շոգենաւը, նաւապետ ՇԵԼՏ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանդիստների համար։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի և Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մուֆֆեանցներին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենսօնին։ (Ե. Հ. Շ.) 3—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքներն սկսվելու են 1899 թ-ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան,
ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդեկէլի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ (9 22) 7—20

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Іюля 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.